ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հունիսի 13-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը ժամանեց Դոմոդեդովոյի օդանավակայան՝ Մայր Աթոռ վերադառնալու համար շուրջ մեկ ու կես ամիս տևած Իր ուղևորությունից:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալ Վ. Ա. Մակարցևը և նույն խորհրդի աշխատակից Էդվարդ Գալստյանը:

Ժամը 15.30-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Երևանի օդանավակայան, ուր դիմավորվեց Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության, Երևանի թեմական խորհրդի անդամների կողմից՝ գլխավորությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի:

Օդանավակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեց նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Մայր Աթոռ և «Հրաշափառ»-ով մուտք գործեց Մայր տաճար, ուր Նրան բարիգալստյան սրտագին խոսք ասաց Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպիսկոպոսը:

Վեհափառ Հայրապետը գոհունակության և շնորհակալության խոսք ասաց Մայր Աթոռ Իր վերադարձի առթիվ արտահայտված բարեմաղթությունների համար, ողջունեց միաբանության անդամներին, Մայր Աթոռի պաշտոնեությանը ու համառոտակի ներկայացրեց Իր ուղևորության տպավորությունները՝ նշելով, որ Ինքը վերադառնում է Մայր Աթոռ՝ լավատես ու մխիթարված ուղևորության արդյունքներից:

Վեհարանում Մայր Աթոռի միաբանությունը բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը ու ստացավ Նրա օրհնությունը:

Բարի՜ վերադարձ Մայր Աթոռ, սիրելի Վեհափառ Հայրապետ Հայոց: